Ամփոփ նյութ

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «Սիլ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ ապահովագրական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
24.01.2019 թվականի թիվ 1/01 ԱԳ-Ա

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումը թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել ***նախազգուշացում՝ խախտումը մեկամսյա ժամկետում վերացնելու և ապագայում նմանատիպ խախտումներ բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:***
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ **ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ**